


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	համար
սարեկան	12 ֆր.
վեցամսեայ	6 "
Արսասահմանի	
համար սարեկան	15 "
վեցամսեայ	8 "
Ամերիկայի համար	
սարեկան	3 ֆր.
վեցամսեայ	1.50 "

Ծանուցման տողը սուս ջին ևրեսին համար 40 ս. իսկ վերջին ևրեսին համար 20 սակրիս է. ևրեսին ևւելի անգամներու համար 20 0/0 զեղջ կրչայ :

Վաւնայի համար ձեւի 40 սակրիս



ՆՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ԲԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ԶՈՐԱԲՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՇՈՒԹՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԵԵԳԻՆԸ ՊԷՏԻ Է ԿԱՆՆՈՎ ՎԱՍԻՆ

Նաւակ եւ որսակ որկեյ խմբագրութեան հասցեի

Редакция на вѣстникѣ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Char,oum“ (Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար ձեւի 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեւի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՈՐՈՇԵՆՔ ԶԱՐՔԵՐԸ

Առանց գործի խօսքը մեռած է. (Շար. Ասի. քիւն)

Այս զանազան շրջանի գործիչներէն շատերը կը մեռնին իրենց շրջանին հետ, պահելով իրենց տնտեսի մէջ վաստակած համբաւը. ոմանք շրջանէն վերջն ալ կապրին, յամառելով նոր հողին վրայ, Բայց որովհետեւ նոր շրջանին պահանջած յատկութիւնները չունին և ոչ ալ այն անմատչելի բարձրութիւնը անձնուիրութեան որ անհրաժեշտ է այլեւս, նոր հողը խոյս կուտայ իրենց օտքերուն տակէն եւ անոնք իրենց կացութիւնը փրկելու համար կը գիմեն հնարքներու, մեքենայութեանց սուտ գործունէութեան մը, որ տակաւ կընդհանրանայ նորեկ արբանեակներու շնորհիւ և վերջապէս սիստէմի կը վերածուի. Այսպէս երեսան կուգան մատերին արիւնը չը թաթխած մարդիկ, գոհհիկ և զարգացած տեսակէն, որոնք ազգին նեարգային վիճակէն և ստեղծուած սիստէմէն օգտուելով կը յաջողին գիրք ստեղծել, սուտ մարտիրոսի համբաւ շինել, ազգին ճակատագիրը զեկազարելու հասնել. բարձրութեան մը ուրիշ կանոնաւորապէս հէտու կը պահեն ճշմարիտ հերոսները, ծառայական զինուորներու անընդունակ գազափարի իրական մարդիկները:

Եթէ այդ մարդոց հոգեբանութեան մէջ մտնենք, պիտի տեսնենք որ իրենց մտահոգութեան միակ առարկան է այնպէս կարգադրել պարագաները որ բան մը չի զոհեն անձնապէս եւ բոլոր զոհողներուն զեկազարը ըլլան. անոնց որ օն տան, անոնց ըզգայուն ու ապստամբ հոգիները շահ գործ են մղելով զէպի ազատութեան կռիւր և յետոյ անոնց մահը ներքողեն պայմանական յաղկանութեամբ, միեւնոյն ժամանակ ազգին համար շարժա-

բուողի համբաւ մը վերապահելով իրենց:

Օհ, ի՞նչ աժան մարտիրոսութիւն:

Այսօր հրապարակի վրայ մէկէ աւելի են այդ երկրորդ տիպարները և ամենէն աւելի ազգեցիկայն պիտի կտրուկ խնամօքէն պատրաստուած հեղինակութեամբ մը որ պարզապէս կը շուարեցնէ ըզգի ու չես կրնար որոշել թէ որո՞նք են ամենէն աւելի արժանիները քու գերագոյն պաշտամունքիդ, մեռնող վազգէնները, Պետոները թէ այդ կենդանի զեկազարները:

Երբ մէկ կողմէն կը տեսնես այն պատիւը, յարգանքը, հեղինակութիւնը, գիրքը, ազգեցութիւնը որ կարգ մը մարդոց կը տրուի, նոյնիսկ ամենամեծ զոհողներու կողմէն որոնք կամ միամտութեամբ, կամ լաքէին բնազդներով եւ կամ թուրութեամբ ինքզինքնին անոնց կըստորագասն, ու միւս կողմէն երբ կը ջանաս համեմատականորէն բեղուն ու լուրջ գործունէութիւն փնտռել, կը տեսնես իսկոյն որ բացը այնքան մեծ է, որ կատարել սնանկութեան կը հասնի. Յեղափոխական ոչ գործ մէկ անձնապէս չես գտներ անոնց վրայ. ոչ երկիր գացած են, ոչ խումբ կազմած, ոչ կուրի մասնակցած, ոչ ումբ արձակած, ոչ ինչ եւ սակայն յեղափոխական կազմակերպութեանց անձնաւորումն են. անոնց հոգին անոնց զեկազարող ուժը. Ու խոպան եւ անմշակ հոգիները զեկազարելու վարժուած, այդ յաւիտենական շէֆերը կուղարկեն զանոնք որ երթան բան մը ընեն, հոգ չէ թէ ժողովուրդը կտորուի, հոգ չէ թէ այդ քայլերը նպատակ չունենան, հոգ չէ թէ նոյնիսկ իրենց զրկած գործիչը առանց գրամի ու առանց զէնքի մնայ. իրենք Եւրոպայի մէջ պէտք ունին գրամի. հոն ժողովներ ընել պիտի տան կամ ազատ երկրի մէջ գործիչ պիտի պահեն. հոն միթիւն կամ օտար լիզուով հրա-

տարակութիւն, որոնց համար ֆրանքները հազարներով հեռագրով կը զրկուին, իսկ Սասունի կամ Վանի գործիչը անօթի կը մնայ, ու դրամ չի զրկուիր անոր որովհետեւ մեր շէֆը իրեն վըստահելի, կամ հաճելի մարդը չի տեսներ հոն, շատ անգամ ալ հիշեցնող չէ տեսած այդ իրական գործիչին. թէեւ առիթներ ներկայացած ըլլան...

Իսկապէս այս շէֆերը յեղափոխութեան մէջ ամեն բան են առանց բան մը ներկայացնելու. Բայց իրենց գործը այնքան մութ ու անորակելի է որ, նոյնիսկ իրենց երկրպագու լաքէները երբ ստիպուած կըլլան անոնց համար բժշկելու, ուրիշ բան չեն գտներ բայց եթէ խօսքեր, որոնք կարծես գիտամբ ընտրուած են այդ մարդիկը ծիծաղելի գարձնելու համար պարզապէս:

Բայց ցաւալին այն է որ հիմա այդ անձերը յաջողած են սիստէմ մը ստեղծել, ծառայականութեան սիստէմ մը. Պահպանելու համար գիրքը, որ յեղափոխութեան անձնազոհութեան վրայ հիմնուած չէ, այլ գիւրաթեքութեան, ճկունութեան վարպետորդիութեան ու կարգ մը բացասական յատկութիւններով վրայ. ասոնք ծառաներու ցանցով մը յախտեցան շրջապատել զիրենք, պատրաստ մէկ հրամանով ու ամեն կնով փառաբանելու կազմակերպութեանց որթաթուփումն. որուն փոխարէն իրենք ալ լաքէները, գտնուած միջավայրին պայմաններէն օգտուելու տեղական ինքնավարութիւնը կը ստանային. հոգ չէ թէ յեղափոխական շահերուն համապատասխանէր կամ ոչ. Այսպէս կամ րապնդուէր սիստէմը ու մենք կը տեսնէինք որ անկիւն մը թերթ մը կը հիմնուէր որ խմբագիրներ կը պահէր, եւ յեղափոխական սընտուկը կը ծածկէր բացը. ասիկա բորականտայի պիտեճէն է օրինաւորապէս ընդունուած ձայներու առաւելութեամբ. անգին կարմիր խաչ մը կը ծնէր որ ա-

ռանց երկար մանրամասնութիւններ փնտռելու երկիր երթալու. համաձայնողի բնատնկան և այլ ապահովութիւններ կուտար ի փոխարինութիւն, այս ալ ինքզինքներու պիտեճէն էր, նոյնպէս ձայներու մեծամասնութեամբ ընդունուած. Ինչո՞ր ուրիշ անհատական հիմնարկութիւններ որ յեղափոխական գործին տակ կը շահագործուէին, տիտղոսներ կը բաշխուէին, ճանբորդութիւններ կը թոյլատրուէին, բոլոր միեւնոյն նպատակին համար, շէֆերու տիրապետութիւնը ապահովել լաքէներու լէզոններով:

Ու ի՞նչ կրկնաբար գրիւնքը, թերթերը իրենց սուտերով, շրտիւններով հասարակութեան ծիծաղելի կը դարձնէին բուն գործը, հայաստանի բնակիչները կը կտորուէին, երբեմն զուր տեղը. երկրի գործիչները անօթի, անզէն կը մնային երբ ահագին պատրաստի գումարներու վրայ շէֆերը նստած կը թխսէին. Չէ՞ որ զրկանք, տառապանք, բանտ աքսոր անբաժան ուղեկիցն է, և միթէ՞ իրենք ալ անձնապէս այդ գծախտութիւնը չէին կրնա. Գործիչը իր գրամը, իր զէնքը թող ճարէ և Պետօին պէս կախազան բարձրանայ, ոսկեհանքի գործիչներուն պէս բանտերուն մէջ փթի:

Ընթերցող. 15 որուան բանտարկութիւնն ալ, 15 տարուան բանտարկութիւնն ալ բանտարկութիւն է. Պուէն Իզմիր, Թիֆլիսէն Օտէսա ապրելու համար աքսորուին ալ աքսոր է. Արաբիա և Թարապուզ. Ռուսիոյ սանահանիքները և Սիպրիա աքսորուին ալ աքսոր է. Բայց ո՞րը իրաւունք ունի ճշմարտապէս տառապած, բանտ, աքսոր գացած ըլլալուն համար պարծենալու, և եթէ շահագործել հարկ ըլլայ այդ գրամագրութիւնը, ո՞րը աւելի իրաւունք ունի շահագործելու. հարկէ ան ով շատ տառապած և շատ տանջուած է:

[Շարունակելի] Տրամաբանութիւն Գերմանիա

ԵՐԻՈՊՈՍԵՒ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Երբ տարիներ առաջ կարծիքս կը հարցուէր ընկերներու կողմէն, որոնք ի զուր փորձած էին իմ ալ այդ միութեան մասնակցելու համաձայնութիւնս ստանալ, թէ ի՞նչու այդքան վերապահում ունիմ դէպի այդ ընդհանուր ուսանողական կազմակերպութիւնը. ես պատասխանեցի՝ առանց այլիւ այլի՝

— Հայ ընդհանուր ուսանողական միութիւն մը գոյութիւն չէր կրնար ունենալ այն ծրարով եւ կամ գործունէութեան եղանակով որ իրեն ան գծած է մանաւանդ :

Ու այդ զիտողութիւնը բրած պահուս՝ կը բացատրէի Եւրոպայի կամ առհասարակ արտասահմանեան հայ ուսանողներու տարբեր կարգերը ու ընկերական տարբեր պայմանները, պայմաններ՝ որոնք անկարելի կ'ըզարձնէին ուսանողութեան յեղափոխական գործունէութեան ծրագիր մը ընդգրկել տալը :

Ու իմ զիտողութիւնս իր բոլոր ճշտութիւնը ստացաւ՝ այն քայքայուած ու անմիաստ վիճակին առջեւ, զոր կը ներկայացնէ Եւրոպայի հայ ուսանողական ընդհանուր միութիւնը երեք շորս տարիներէ ի վեր, Պատմաբանները, այդ ողբալի գրութեան կարելի է քննել աւելի մօտէն, ինչ որ, բնականաբար, կրկնութիւն մը պիտի ըլլայ. իմ «զիտողութեան» հիմնական աւելի մանրամասն գծերուն :

Հայ ուսանողները եկած են մեծ մասամբ Տաճկաստանէն եւ Կովկասէն : Այդ երկու տարբեր միջավայրի ուսանողներու ձգտումները եւ կոչումները տարբեր են, անհերքելիօրէն :

Տաճկահայ ուսանողը, երբ կուզէ Տաճկաստան վերադառնալ, չը կըրնար առանց խոշոր ու վտանգաւոր անպատեհութիւններու մասնակցիլ Եւրոպայի Հ. Աւսանողական ընկ. Միութեան, քանի որ ինչպէս ըսինքս ասոր գծած ծրագիրը ուղղակի ու բացարձակ հակառակակալան է :

Ուստի հայ ուսանողը այդ տեսակէտով շատ աւելի նպատաւոր պայմաններու տակ կը գտնուի ու երբէք զարմանալի չէ որ Ե. Հ. Ա. Միութեան այդ մասը ուղ ած եւ գ ճ ա ծ ըլլալը :

լայ այդ ողբով ծրագիր մը : Հետեւեալը չեմ ուզեր երթալ : Յոյն-թրքական պատերազմին ժամանակ Եւրոպայի հայ ուս. Միութիւնը՝ իր համագումարի պահուն «մեծամասնութեան որոշումով» համակրական հետագիր կը զարնուի Մակեդոնացի յեղափոխականներու պետին :

Ուրիշ համագումարի մը պահուն գարձեալ «մեծամասնութեան որոշումով» համակրական հետագիր կը զարնուի Մակեդոնացի յեղափոխականներու պետին :

Այդ վերջին համագումարին առաջարկողներ եղան հետագիր զարնել համակրական, ուսու ուսանողութեան յեղափոխական շարժումի ներկայացուցիչներուն, բայց «Մեծամասնութեամբ» այդ առաջարկը մերժուեցաւ : Ահա իրողութիւնը :

Յոյներու ու Մակեդոնացիներու հետագիր տալու մեծամասնութիւնը եղած է միեւնոյն մեծամասնութիւնը որ մերժած է ուսու ուսանողական շարժումին համակրանք յայտնելու, որովհետեւ այդ բանը կրնար եւ «իրաւամբ» շատ սուղի նստիլ ուստի հայ ուսանողներուն :

Ու այդ «մերժող ու վճռող» ուսանողական «մեծամասնութիւնը» եղած են Ռուսահայ Ուսանողները, որոնք սակայն երբ ինչիցը Տաճկահայ ուսանողի վտանգաւորուն շուրջը զարձած է, իրենց «կայիին» խոհեմ հետատեսութիւնը ցոյց չեն տուած :

Ահաւասիկ իրողութիւն մը ճշմարիտ, բացարձակ անժխտելի ու անհունօրէն բացայայտիչ՝ ցոյց տալու համար որ Եւրոպայի հայ ուս. ընդհ. միութիւնը, իր այդ կարգի «ցուցամուր» ծրագրով կեանք չպիտի կրնար ունենալ երկար-ժամանակ :

Տաճկահայ ուսանողները ի՛նչոր փորձած են այդ «հետագրամուտութեան» վտանգաւորութիւնները բացատրել. ի զուր փորձած են բացատրել թէ Ե. Հ. Ա. ընդհ. Միութիւնը Տաճկաստանէն եկող ուսանողներու ապագան փշրելով չէ որ պիտի կրնայ ազգային ճակատագրին մէջ մեծ դեր մը խաղալ : Ու երբ յուսահատած են աչք ծակող «ոչխարամիտներու» մտքներու մեծամասնութեան մը առջեւ, իրենք ալ հնարամտութիւն ունեցած են ուս. յեղափոխական շարժումին օր-ցերեկով հետագիր մը զարնելու միտքը առաջ նետել : Բայց այդ «ոչխարամիտներու» միտքը վերածվում է վարնոց կալածուրի. կամ թէ չէ զրոյցի ամենասովորական բառին տրուում է վարնոց յետին միտք :

Ամեն բան գիտեմ, ով ում հոմանունին է, դերասանուհիներէն որն է քօքօթ. այդ խնդիրներէ վերաբերմամբ պատրաստ եմ մրցական քննութեան մտնել, Ընկած հոչակաւորներին փոքրացրած անուններով եմ յիշում. Սօնեա Եթիկ, Օլիա Կարետնիկովա, Գրաւիւրկա, Մուրկա Խորեկ ու արդուզարդիս եւ շարժուածիս մէջ նրանց հետեւում : Պետերբուրգի օրիորդ եմ, պետերբուրգեան կրթութիւնով : Սրտի փոխարէն ունեմ ինչ որ վկայված տնայ դնող մեքենա, ու լիովին գիտակցութիւն, թէ որչափ հրաշալի է ստեղծել ինձ բնութիւնը, ու այդ մարդիկ միանգամ տեսնելով ինձ պէտք է բաղձան, ու որչափ ես արտասովոր կերպով ճարպիկ եմ նրանց վերածելու սիրտին անասուններէ եւ յիմարներէ :

խարամիտները» գայերու կատաղութեամբ ինքզինքնին պաշտպանած են այդ առաջարկին դէմ, մէջ նետելով իրենց շահերու վտանգութիւնը այդ կարգի քայլի մը հետեւանքով, ու մեծ մասն ու թեմա մը մերժած են Տաճկահայ ուսանողութեան առաջարկը :

Ես կը զարմանամ սակայն թէ ի՞նչպէս կարելի է այդ կարգի սխալներ գործել եւ նոյն իսկ թողուլ որ գործունէ լինէ երբէք նախօրոք սարքուած խաղեր չը կան, քանի որ ինձի հաւաստած են թէ այդ Միութեան կը մասնակցին բաւական խելահաս մարդիկ, որոնք ցայսօր այդ կազմակերպութեան ղեկը իրենց ձեռքիս մէջ ունին եւ որոնք, կըսեն թէ, ազգային գործերու մէջ ալ մեծ հեղինակութիւն ունին... !

Ուսանողական ընդհանուր միութեան ճշմարիտ գործունէութեան ծրագրով, պէտք է, ըստ իս, ըլլայ բոլորովին ու ամբողջովին ուսանողական, ու անոր զեկը իրենց ձեռքին մէջ պէտք է ունենան միմիայն արձանագրուած ու կանոնաւոր ուսանողներ, որոնք գոնէ մէկ քննութիւն անցուցած են համալսարանի մը եւ իրենց մտադրած ճիւղին մէջ :

Այս բանը հարկաւոր է ու անհրաժեշտ եթէ ոչ, ուսանողութիւնը խաղալիք կը դառնայ անկարողներու ջնկատի մը փառասիրութիւններուն, որոնք իրենց բոլոր հնարամտութիւնը ու խելահասութիւնը իրականութիւն մըն է ստիկալ միշտ համալսարաններէ դուրս փնտռած են :

Ինչ կը ներկայացնէ այսօրուան ուսանողական միութիւնը : Ինչպէս ցած է զանազան կուսակցութիւններու պատկանող ու ուսանող անուն կրող կարգ մը երիտասարդներէ, բայց ոչ իրապէս ուսանողներէ : Եթէ հարկ ըլլայ անուններ ալ կարող եմ առաջ բերել, որոնք միշտ յաջողած են, իրենց գործը ստով քննել՝ նորակ ուսանողներու նոր հետաքրքրութիւններով, բայց բնաւ իրական ուսանողական շարժումով մը :

Ինչ էր սա վերջիլ Ուսանողական համագումարը, որ Պէտն քաղաքին մէջ իբր թէ տեղի ունեցաւ. Գանի՞ ուսանողական քաղաքներէ ներկայացուցիչներ ունէր. Ու եթէ քանի մը ներկայացուցիչներ կային, քանի՞ ուսանողի ընտրութիւնը կը ներկայացնէին :

Նոյն իսկ ճանապարհին զբաղուած այն էր որ ճամբորդ այր մարդկանց սրտերն էի յաղթահարում, եւ բարկացնում ճամբորդ կիներին : Հասնում եմ այս տեղ, իշխանը այս տեղ է : Հրահրվեց հին բոցը, իսկ ես թոյլ չեմ տալիս, մարում եմ, մտածում եմ, սպասիր, ստոր, ես կը վերջացնեմ քեզ : Պետերբուրգում ինչ անպատեհութիւններ արի. հերիք է, այստեղ քեզ այնպիսի մի անպատեհութեան մէջ կը խոթեմ որ այնուհետեւ էլ իշխանի մասին մտածելը անկարելի լինի, որ իմ եւ նրա միջեւ անանցանելի անդունդ բացվի, իսկ իշխանը միտքս ընկած վայր կեանին ամբողջ խղճատանք գոռում էր թող նրան, նա քոնը չէ. ցեխ, Դու անհիծեալ ես եւ անէծքի մէջ էլ ապրիր, բայց մաքուր մարդին ճանճի մէջ մի գցիր :

Դրացի երիտասարդութիւնը շարունակ ինձ մօտ էր հաւաքվում եւ շուտով գաւառի թագուհին դարձայ :

Համագումարի «Լիազոր Մարմինը» Զաքարիայի լուծութիւնը պահեց այդ առիթը :

Երեք տարիներէ ի վեր անկիւնը քաշուած համագումարը, իրօք, փայլուն կերպով մը չէր վերակազուէր : Պէտն քաղաք մըն է, ուր հայ ուսանողներ գոնէ քիչ կան. ու ի՞նչու ընտրել Պէտն համագումարի համար, քանի որ հաւաքուող ուսանողները եղած են գրեթէ ժընէվի ու Լոզանի ուսանողները. ի՞նչու այդպահուն համագումարը չկազմել վերստին ժընէվի մէջ՝ մանաւանդ որ Լիազորը ինչպէս միշտ, ստանալով կուղէր ընել համագումարի որոշումը, Պրիւքսէլէն վերջ ընտրած էր Փարիզը. եթէ պե՛տե՛ական կատարութիւնը արգելքներ հանէր համագումարի կազմումին դէմ... :

Յիւրիսի մէջ եղած համագումար մը 10-17 ուսանող եւ ոչ-ուսանողի որոշումով Լիազոր մարմին մը կըստեղծէ. ու այդ լիազորը, ծիծաղելի հոն է, ուսանողներ կատարելու համար կընտրուի : Ու այդ լիազորը կը կատարէ այսօր ուսանողութիւնը... :

Ու ընկանաբար «Լիազոր մարմին» մը լիազորութեամբ իր ուղած ձեռով պիտի խաղար ուսանողներու անուանին հետ, թէեւ ինքը կոչուած ըլլար գործադրելու «կոնգրէսի» վճիռները :

Փարիզ Ծարունակելի

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Շումլայի նախորդ պատ. թաղականութեան քոտամեայ ու միտասանամեայ — 1900 Յունվար 1 — 1904 զեկտեմբեր 31 — պաշտօնավարութեան համարաւորութիւնը, ժողովրդեան իտեւ դրուած ըլլալով, Շումլայի հայ հազարակոթեան կողմանէ ներկայ չլատ. թաղական խորհրդոյ երեք անդամներուն ներկայութեանը Ազգ խորհրդարանի մէջ, նախորդ պատուարժան թաղականութեան հաշիւները աչքէ անցնելով, ստորագրեալներս, ներկայ տեղեկագրով կը փութանք ամփօփել մեր քննութեան արդիւնքը հետեւեալ երեք հայեցակէտերով :

Ապրում ենք ուզածներս պէս. քէֆ ենք անում, սիրախաղութիւն. մեր զարճութիւններին ու յիմարութիւններին վերջ չը կայ. իսկ սիրտս կարծես կատուններն են ճանկտում, իշխանի մօտենալուն եւ միտքս աւսելուն պէս, ես ամբողջովին չորանում եմ, սառչում... ահա ուրէ իմ մահը... Եւ ահա այստեղ սատանան սկսեց ինձ զլիւց հանել :

— Ի՞նչու ես քեզ տանջում, ինչի ես ինքզինքդ կորցնում : Սիրելի ես ուզում սիրիլ. իշխանը քեզ սիրում է. ամուսնացիր. այդ նրբութիւնները եւ խղճահարութիւնները մի կողմ նետիր. ամէն բան թագցրու, խաբիր եւ երջանիկ եղիր :

Ձեմ կարողանում... երջանիկ լինել եմ ուզում, նա ձեռքս մօտ է, ինքնիրեն է սահում դէպի ինձ. իսկ ձեռքերս քարացածի նման, չեն բարձրանում վօրցնելու համար... վախ... ամօթ... տանջանք... Աստուած իմ, այդ ինչ անիծեալ ժամանակ էր :

Ա. ԱՄՏԻՏԵԱՏՐՈՂ
ՎԻԿՏՈՐԻԱ ՊԵՂԻՍՏՅԱՆ
(Տօնախմբութիւն)
(Գրագրի յիշողութիւններէն)
(Մարզի, ուսանողներէն)
30
(Շար. նախորդ թիւէն)

1. Օրինապահութեան տեսակետով :
2. Մատակարարութեան տեսակետով :
3. Ոտնձգութեան տեսակետով :

Ա.—Շուկայի նախորդ պատ. թաղականութեան պաշտօնավարութեան գործառնութիւններու քննութեան անվիճելի կերպով հաստատուած է և ստորագրողներս հաստատուած է և զբաղական շոյափելի փաստերով, համարում գոյացուցած ենք, որ պատ. թաղականութեան գործառնութիւններուն մէջ օրինապահութիւնն ու ճշգրտագիտութիւնը ոչ թէ անտեսուած այլ՝ չէ յարգուած, և անա թէ ինչպէս :

Պատ. թաղականութիւնը 1900 յուլիս 4 — 1904 յուլիս 24, 11 անգամով մեծ մասամբ հրէայ սեղանաւորներէ փոխառութիւններ ըրած է մեծ մասամբ 0/0 24 տոկոսով և թէ և այս փոխառութիւններէ զուրկ, ուրիշ անտեղոս փոխառութիւններ ալ ըրեր է. սակայն այս փոխառութիւններուն եւ ոչ մէկուն համար ո եւ է ատենագրութիւն եւ պաշտօնական որոշում եղած չէ թաղականութեան արձանագրութեան տեսքին մէջ. եւ սակայն անուած 7631 ֆրանք գումարի սը 0/0ին 24ով հրէա սեղանաւորներէն փոխառութիւններ ըրած է մինչ Շուկայի Պուլկարական պանքաներ 0/0ին 10—12ով փոխառութիւններ ըրած են ու կընեն միշտ :

Զարմանալի է որ այդ պատ. թաղականութիւնը 1904 հոկտեմբեր 17ին խմբագրած ատենագրութեան մէջ, 10/0ին 24 տոկոսով 52 եւ 18 տոկոսով 15 նարոյնոս պարտքը վճարելու որով ազգը ծանր տոկոսէ մը ազատելու համար, ուրիշ տեղէ մը աւելի նպաստաւոր պայմաններով, փոխառութիւն ընելու համար որոշում տալէ վերջին իսկ, մինչեւ 1904 յուլիս 24 նոյնօրինակ տոկոսներով հրէայ սեղանաւորէ մը փոխառութիւններ ըրած է :

Նշանակելի եւ մանաւանդ կարեւոր պարագայ մըն ալ սա է որ մինչդեռ 30 ֆրանքի ծախուած ազգապատկան գետնի մը համար ատենագրութիւն ըրած է, անդին խոշոր ու կարեւոր գումարներու փոխառութեան մասին ո եւ է օրինական գործառնութիւն եւ զոտ չէ արձանագրութեան տեսքին մէջ այս պարագան ինքնին ապացոյց մըն է հաստատելու, որ պատ. թաղականութիւնը ոչ թէ անտեսուած է

արձանագրութեան կարեւորութիւնն ու օրինապահութիւնը, այլ յարգած չէ օրէնքը եւ այսու պատճառ եղած անարդարանալի թիւրիմացումներու և անպատեհութիւններու :

Պատ. թաղականութիւնը յարգած չէ օրէնքը նոյնիսկ այնպիսի պարագաներու մէջ. երբ ազգային սահմանադրութիւնը որոշ ու մեկին բաժանութիւններ եւ պարտաւորիչ կանոններ է հաստատեր. այսպէս թաղականութիւնը ազգապատկան տուն եւ այլն ծախսեր է առանց ի գործ դնելու Սահմանադրութեան 49րդ յօդուածը, որուն համեմատ ոչ մի ազգային մարմին, իրաւունք չունի առանց տնտեսական ժողովի զիտութեան ո եւ է ազգապատկան կալուած ծախելու :

Պատ. թաղական խորհրդոյ հաշիւները աչքէ անցուած ատեն, Պարոն Մկրտիչ հճ. Սահմանադրութեան վճարուած 960 ֆր. գումարին հետ աննշուած թիւն ունեցող հարցի մը առթիւ ատենագրութեան տեսքին մէջ դիտուեցաւ որ 1897ին ծախուած ազգապատկան շրջապատին ծամեայ հասոյթի հաշուեկէշիւր կայ, այս հաշուեկէշիւր ծամանակին թաղականութեան կողմանէ ո եւ է օրինական վաւերացում չէ ունեցած, միայն հաշոյն տակը դիտել տրուած է, որ 1436 ֆր. 40 օսնդիմը պարտք մը ստուգելու համար Հոգաբարձութեան 1888թ տեսքին պէտք է զիմել :

Նախորդ պատ. թաղականութիւնը առանց նկատի առնելու այս դիտողութիւնը, եւ առանց ստուգելու իրողութիւնը Հոգաբարձութեան միջոցաւ. այն 1436 ֆր. 40 օսնդ. պարտքին (որ օրինաւոր չը պիտի համարուի քանի որ ստուգուած չէ) 200 ֆր. գումար մը վճարած է : Պատ. թաղականութեան իր վճարուածն առաջ պարտաւոր էր ստուգել իրողութիւնը եւ ըստ այնմ վճարել, եւ ասի՝ սա միակ պատճառաւ, որովհետեւ ցուցադրուած հաշիւը չէ վաւերացուած և հետո ո եւ է պաշտօնական հանգամանք առնելէ : Աւրեմն պատ. թաղականութեան վճարուած օրինական չէ ու չի պիտի համարուի, ցորչափ օրինական վաւերացում ձեռք չի բերուի :

Բ. Մատակարարութեան տեսակետով ալ պատ. թաղականութիւնը դժբաղտարար աշխուրջ ու խնամատար զբտնուած չէ. այնպէս որ գիտնալով

Շուկայի Հայ հասարակութեան նիւթական անձուկ եւ աննախանձելի վիճակը, ազգին սնտուկը բեռնաւորած է ապօրինի տոկոսով մը, ինչպէս յիշեցինք վերեւ :

Ազգին շահը ու օրինական պարտաւորութեանց դիտակցութիւնը, ոչ մէկ կերպով չէր պահանջէր որ մեր թաղականները ազգային պէտքերու մատակարարութեան մէջ, ուզող բեռնաւորեն այնպիսի տոկոսներով, որոնք տեղական օրէնքով արգիւտուած ըլլալէ զատ նոյնիսկ պատճական կանոններ հաստատուած են անաստողներու եւ կապալառուներու դէմ : Ազգային նիւթական պէտքերու անմիջական գոհացման մէջ, պաշտօնական մարմիններէ միայն նախաձեռնութեան ոգի ու յղացող միտք չի պահանջուիր. պէտք է որ ձեռք սուռուած միջոցներն ու մատակարարութիւնը օրինական ըլլալէ զատ յարմարին նաեւ տեղական պայմաններուն, եւ եթէ այնչափ նպաստաւոր պայմաններով ու հանգամանքով օժտուած չըլլան, գէթ ի վիճակի չըլլան ազգին ազեղտարեր դատնալու : Թաւ է ըսել որ Շուկայի նախորդ պատ. թաղականութիւնը անտեսուած է այս պարագան եւ 8—900 ֆր. աւելորդ ու ապօրէն տոկոս մը վճարել տուած է ազգին :

Գ. Նախորդ պատ. թաղականութիւնը 1902—1903 զարոյցական տարեշրջանին, Ազգ. վարժ. Հոգ. իշխանութեան տակ գտնուող ազգային վարժարանէն զատ, օտար (չըսելու համար հակազգային) վարժարան մը բանալով, հոգաբարձական իրաւանց զէմ տնտէգութիւններ ըլլած ու ազգը մտատորապէս 300 ֆր. աւելորդ ծախքերու ենթարկած է : Թաղականութեան ատենագրութեան տեսքին մէջ 1902 յուլիս 28 թուակիր հանրադիր մը կայ, այս հանրագիրը կցուած է 1902 յուլիս 28ին խմբագրուած ատենագրութեան մը. որով թաղականութիւնը արգարացնելու պատ է իր բացած վարժարանը. սակայն այդ հանրագիրը Ազգ. վարժարանէ զատ օտար վարժարան մը բանալու իրաւունք չէ տուած թաղականութեան եւ չէր կրնար տալ. երբ հոգաբարձութիւն մը գոյութիւն ունէր, ազգային վարժարանը բաց էր եւ ազգն ու տեղական տիրող օրէնքը անոր հոգաբարձութեան վերա-

պահած էր վարժարանի խնդիրը ոչ թէ թաղականութեան եւ կամ խնամակալութիւններուն, ժողովրդական պահանջ մը չի կրնար օրինաւոր ներկատուիլ. երբ իրեն հիմ չունի օրէնքն ու հանրային շահը, թող որ հանրագիրն ատարագրուելի, պատ. թաղականութեան եւ իրէք օտար վարժարանի մը բացուած չին պահանջած :

Ծաւ է ըսել, որ պատ. թաղականութիւնը Շուկայի ընդհանուր վարժարանաց կրթական պ. ներկայացուցչին եւ պ. պատասխանին պաշտօնական գիմումներուն եւ հրամանին վրայ իսկ, բացուած օտար վարժարանի փակման հարցին մէջ պնդելով Շուկայի պէս ազգապատկ ու պարտքի տակ ընձուած գաղութիւր յոռի մատակարարութեան մը զառնաղէտ հետեւանքներուն ենթարկած է 902—903 տարեշրջանի 2800—3000 ֆր. ծախքին : Աւելին ալ կայ 902—903 զարոյցական տարեշրջանին պատ. հոգաբարձութեան կողմանէ օրինաւորապէս պայմանաւորուած ուսուցչական մարմինը, իր պաշտօնավարութեան Յրդ ամսի վերջերը. նորընտիր հոգաբարձութեան կողմանէ պաշտօնակ ըլլալով, կտաւարութեան գիմած եւ ազգը քանի մը հարիւր ֆրանքի նոր ու անտեղի ծախքերու ենթարկած է. եւ ասի ուզակի արդիւնք եղած է թաղականութեան ու տնտէգութեան :

Մեր ցարդ ի վերեւ յայտնած ու ցուցադրած իրողութիւններէն պարզ է հետեւեցնել որ նախորդ թաղականութեան քառամեայ եւ միտասանամեայ պաշտօնավարութեան միջոցին, յոռի մատակարարութեան, ու տնտէգութեան եւ աշտուութեան հետեւանքով ազգին մտատորապէս 4100 ֆրանքը ի վնաս ազգին գործածուել է օրուն պատասխանատուն է թաղականութիւնը :

Կարեւոր է յիշել սա պարագան որ պատ. հոգաբարձութեան, նախորդ պատ. թաղականութեան գանձած գումարներու բաղդատական քննութիւնը նոր լուսաբանութիւններ կրնայ առաջ բերել :

Մեր ներկայ տեղեկագիրը ներկայանելով Շուկայի Հայ հասարակութեան գաւառատանին, ներկայ նորընտիր պատ. թաղականութեան կը խնդրեմ որ բարեհաճի նկատի առնելու ժամանակի ներկայ պայմանս

Վիկտորիան աչքերը ձեռքով ծածկելով շարունակեց :

—Սառնուածքս ի՞նչ... քսան տարեկան... եւ, առողջ, ուժեղ, սիրահարմար եւ մինչեւ ուղեղս փշաքած, զգայնութիւնը արթնեց... իսկ Բուրուըն ինձ պաղ էր անւանում. պատահում էր որ իշխանի ինձ հետ խօսած վայրկեանին, աչքերիս առջեւ կանանչ շրջանակներ էին երեւան գալիս. կոկորդոս սեղմում էր ու ես ստիպում էի եղունկներս մխել ափիս մէջ, սեղմել, մինչեւ արիւն հոսի, որովհետեւ զգում էի որ չը պէտք է կարողանամ սանձել ինձ եւ գիրկը պէտք է ընկնեմ. ինչ ուզում է թող լինի, թող կորչին բոլոր մտածումները, սկզբունքները ու վախերը : անա քոնն եմ... ամբողջ գիշերներ մի կողքիցս միւսին եմ դառնում... լաց եմ լինում... Զափազանց նիհարեցի... Աստուած գիտէ թէ ինչի սկսեցի նմանել...

Այն ժամանակ տարօրինակ շրջա-

նակ ստեղծվեց ինձ մօտ : Հինգ թեկ նստուններ կային, մէկը միւսից գեղեցիկ եւ կտորիչ : Ահա այն ծովագնացն էլ, որ Սինգապուրից ձեռքս խնդրել էր, այն ժամանակ այստեղ, այդ հինգի մէջ էր, դեռ նոր էր զարոյցը աւարտել :

Մենք ամէնքս էլ դուրս էինք խօսում, խմում ինք. ես տղամարդի զգեստներ էի հագնում, շալվար եւ մետաքսէ շապիկ : Ամենքս էլ շափազանց սիրահարված : Ամենքի աչքերն էլ գայլի աչքերի պէս ինձ վրա վառվում էին...

Ի վրայ Աֆանասիչին էլ թողարկուած էր մտնել մեր երկտասարդ խմբի մէջ, որովհետեւ գիտարի վրա լաւ անում էր. ուսուսական շատ երգեր գիտէր, կարողանում էր պատկերացնել հրէա ներին եւ հայերին, և ընդհանրապէս շարժական լիակատար հաւաքածոյ էր ամեն տեսակ օյիւնները եւ առականքի : Ասում եմ ձեզ, որ բաւական զարեւալի ծաղրածու էր : Սաչա Պորուր-

կովը, իմ քարտաւ Պորուրկովի տղան, խեղճը չէր հասկանում թէ ինչի ես իրան խորթ տղաս էր անւանում, այժմ մեռած է. հրաշալի կերպով գնչուի երգեր էր երգում, ու Աֆանասիչը գիտարով իրան ձայնակցում : Միայն գիտարի համար էինք մենք հանդուրժում Աֆանասիչին, նա մեզ համար շատ հանելու չէր Շուկայի հարում էր եւ հարած միջոցին կծու շար էր լինում եւ իմար. ու այնպիսի աղտոտ իրաւոր էր արտասանում, որ մարդի ակտիւնները կախվում էին : Իսկ ես աւելի ատում էի ինձ վրա նայելու ձեռք պատճառով, նստում էր հետո, ու կողքից աչքերը յարում էր, առանց թարթիչները շարժելու. աչքերն էլ այնքան վառ էին, քոնոյ, ստոր կարծես գող ու շարունակ ձեռքով շան աչքեր լինէին. կարծես այդ նայուածքով մարդի զգեստները հանում էր... Երբեմն չէի հանդուրժում եւ զոյում էի :

—Ինչ էք այդպէս նայում ինձ վրա, ինչ էք ուզում, ինչ էք գտել ինձ վրա :

Ամաչում եւ պատասխանում էր.

—Ոնգրեմ, ոչինչ, ուրախ եմ որ դուք այսօր այդպէս զգալի էք. թոյլ տեղք ձեր ձեռքը համարեցի... եւ մարմինս փշաքաղում էր... գուք այդ զգացումը ըմբռնել չէք կարող, դա միայն կանանց յատուկ է : Այդ ոչ ամօթի եւ ոչ զգանքի զգացում է, այդ սեռական վախն է կարծեմ, նմանազգացումը զգանքի հետ խօսնու ջգում ես բնազգումը որ մի ամենաստոր կնիք զարկեց վրադ իր ամենաստորին շրթունքներով մի ամենացած մարդ եւ քու մասին այնպիսի վատ բան է մտածում, երեւակայում որ առանց նրա մտքերը գիտենալու բնազգական հոտառութեամբ վատ և չփոթված ես զգում քեզ :

(Շարունակելի)

ներն ու պահանջները եւ կարգ ու սարք դնել թողականութեան վարչային ու հաշուական ապագայ գործառնութիւններու մէջ, որոնք անհրաժեշտ են վարչութեան ու մատակարարութեան կանոնաւոր վիճակ մը ապահովելու տեսակէտով. որովհետեւ հոն պատասխանատուութիւնները չեն ճշգրտած եւ պարտուց եւ իրականացրեցողութիւնը չեն սահմանաւորուած օրէնքով, զիջումներ ու անպատեհութիւններ անպակաս կը լինեն, որոնց ուղղակի լանցաւորն ու պատասխանատուն գտնելն ալ շատ անգամ կը դժուարանայ:

Մեր ներկայ տեղեկագիրը հրատարակութեան տարով, ստորագրեալներս, սին վիճասիրութեան եւ խրճարժանքի մարմաւոր չունինք եւ չենք ուզեր ունենալ, որովհետեւ ցուցադրուած հարցերը, իրողութիւններովրայ ունին իրենց հիմը եւ կը փափաքենք որ Շուման յետ այսօրիկ ժամանակի պահանջներուն համապատասխանող վարչութիւններու պատասխանատուութեան տակ տեսնէ իր ազգային գործերը:

Հրապարակաւ շնորհակալութիւննիս կը յայտնեմ ներկայ պատ. թաղականութեան պ. Ասենապետին եւ բանկի մը անդամներուն որոնք հաշուական լուարանութիւններու համար աջակից կ'ընեն մեզ:

Պետրոս Մովսէսեան
Օհաննէս Մանիսեան
Պողոս Ս. Պոյաճեան

Շուման, 30 Ապրիլ

ՆԱԲԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պատուարժան
Խմբ. Շարժում ազգագուտ լրագրի Աստ

Հանձնեցք հրատարակել ի ստորեւ գրուած յայտարարութիւնը Ձեր ազգագուտ լրագրոյ մտաւոր թւոյն մէջ, որու համար կանխաւ մեր խորին շնորհակալութիւնը կը մատուցանենք:

Մնամք յարգանք
Ի դիմաց թաղական խորհրդոյ
Ասենապետ Ասենապետ
Ն. Գ. Քէստանեան Խ. Աղնաւորեան
Վառնա 14 մայիս
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Խորհուրդս նկատելով որ Սահակայ և Մեսրոպայ անմահ յիշատակը տօնելու համար անհատի մը կողմանէ տոմսեր հրապարակ հանուած են, կը փութայ յայտարարել թէ՛ այդ տոմսերու մասին ոչ մէկ կերպով պատասխանատու չէ ինքը եւ ոչ ալ կրնայ յանձնարարել արգոյ ազգայնոց այդ տեսակ տոմսեր գնելու:

Մ. Խ. Թաղ. Խորհուրդը ճիշդ ժամանակին է հասցնում իր այս ազգարարութիւնը: Ոճը քաղաքավարի է բայց շատ բան է հասկացվում: Մենք մեր կողմից կաւելցնենք, որ Սահակ և Մեսրոպն էին մնացել առանց շահագործումի ու հիմա դրանց են ուղում ճարպիկ մարդիկ շահագործել:

Պատ. Խմբ. Շարժում լրագրի Վառնա

Անցած հոկտեմբեր ամսուան մէջ՝ Արժ. Տ. Սարգիս Ղարիպեան հայրը՝ մէկ շաբաթ շարունակ պատելով, դպրոցական տուրքեր հաւաքեց Գանուբի եղբրքը զբնուող գիւղերու խանութպան արգոյ ազգայիններէն:

Ս. Չատկէն ետքն ալ՝ Հոգաբարձութեան խնդրանց համաձայն Գուրթ. Բունարի ամբողջ գիւղը շրջեցաւ, եւ բաւական գծուար աշխատութեան ենթարկուած՝ գտաւ նոր բաժանորդներ որոնցմէ նոր դպրոցական տուրքեր և թէ ուրիշ յետեւալ պարտքերն հաւաքելով՝ տրուած ընկալագիրներուն համաձայն գոյացած գումարն ամբողջովին յանձնեց Հոգաբարձութեանս:

Ուստի Հոգաբարձութիւնս պարտանձին կը համարի հրապարակաւ յայտնել իր սրտագին շնորհակալիքը Արժ. Տէր Սարգիս հօր՝ որ, իր անձնական շահն առանց ինկատի առնելու, ամենայն եււանդով կաշխատի վարժարաններուն ոգտին համար, նոյնպէս շնորհակալութիւն՝ այն ազնիւ խանութպաններուն, որոնք սիրալոյսով նուիրած են ու կը նուիրեն միշտ իրենց լուսմաները ազգ. մանկուոյն դաստիարակութեան գործին:

Ի դիմաց Ազգ. Երկ. Վարժ. Հոգաբարձութեան
Ասենապետ Ասենապետ
Ա. Սարգսեան Օ. Ս. Փափազեան
Միլիտարէ 8 մայիս

Վառնա 14 մայիս

Հայկական ընթերցարանի վարչութիւնը ի նկատի ունենալով լարանական ժողովներու օգուտը որոշած է տեսն ատեն այդ տեսակ ժողովներ սարքել:

Առաջին ժողովը պիտի գումարուի յառաջիկայ կիրակի, մայիս 15, կէսօրէն յետոյ ժամը 2ին: Պիտի ատենախօսեն հետեւեալները՝

Վեր. Ամիրխանեանց—մեր գրգրոցները:

Արժ. Վ. քհ. Մըսրէլեան — Կատարեալ մարդկութիւն:

Տ. Հ. Խոչապուլեան—Հայ կըրթական գործը ներկայ պայմաններում:

Ժողովը պիտի գումարուի ազգ. վարժարանի մէջ:

Ի դիմաց վարչութեան
Ասենապետ Ասենապետ
Յ. Թ. Արապեան Օ. Օհանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փիլիպէի մէջ մեծ շքեղութեամբ և պաշտօնական բարձր ներկայացուցիչներու մասնակց

ցութեամբ տօնուեցաւ տպարանաշէտ և գրավաճառ Դանովի գործունէութեան յիսնամեակը: Այդ յարգելի անձնաւորութիւնը զեռ թուրքերու տիրապետութեան ժամանակէն սկսեալ, մեծ եռանդ, մեծ ճիգեր թափած է պուլկար ժողովրդին մտաւոր պաշար հայթայթելու համար:

— Մայիս 11ին Սօֆիայի քաղաքային պարտէզին մէջ, օպերտուկցիօնիստ և ասոնց հակառակ ուսանողներու մէջ ցաւալի ընդհարումներ տեղի ունեցեր են. բաթօններ եւ ատրճանակներ մէջտեղ եղեր են. Վիրաւորեալներ կան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Գերմանիոյ միջամտութեան շնորհիւ Բ. Դուռը գոհացում սըւած է Ռուսիէն կառավարութեան պահանջներուն հետեւեալ կերպով:

1 Թուրքիան Մակեդոնիոյ Ուլախ բնակչութիւնը կընդունի իբր առանձին ցեղ:

2 Ուլախ լեզուն իբր պաշտօնական լեզու պիտի ընդունուի Ուլախ դպրոցներու և եկեղեցիներու մէջ:

3 Եանինայի վալին ներողութիւն պիտի խնդրէ Ռուսմանական հիւպատոսէն, Ռուսիէն դպրոցական երկու վերատեսուչները քաղաքէն արտաքսելուն համար:

4 Այդ երկու վերատեսուչները կրկին Եանինա պիտի վերագառնան իրենց պաշտօնով:

5 «Իրերու կացութիւնը» ինչ որ կը վերաբերի եկեղեցական գործերու պիտի պահպանուի:

— Պատերազմական նախարարութիւնը վերջացնելու վրայ է չորրորդ զորաբանակին ընտրիֆները զէնքի կոչելը, զորս պիտի շրջէ Արաբիա ապստամբութիւնը ճնշելու համար: Նոյն զորաբաժնի արաբ զինուորները կը հրատարին արաբ ապստամբներուն դէմ կռուի երթալ:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Մուսկուլայի մէջ տեղի ունեցեր է ռուս կանանց ժողովը, ժողովին մէջ կիները իրենց որոշումներով այդ մարդոց հաւասար իրաւունքներ կը պահանջեն, կը պահանջեն նաեւ կառավարութեան ձեւի փոփոխում:

— Ամիրալ Պրիլիով հրաման ստացած է անմիջապէս մեկնիլ Վլատիվոսթօք որ և ապացոյց է թէ Բօժտէնսկէնսքիյ իրօք տկար է:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Մայիս 11ին Կուենթուրիէ կը հեռագրեն որ նշաններ կան թէ ճարձագիթ իրենց յարձակողական ծրագիրը պիտի թողուն եւ մեծ պոյոյտ մը պիտի ընեն Մօնկօլիայի վրայով:

— Թօքթօյէ Լօնտօն կը հեռագրեն թէ Վլատիվոսթօքի երկաթաթուղին Մօնկօլիոյ սահմանին վրայ կտրուած է, ինչպէս նաեւ Սինմինթիին ուղղութեամբ:

— Թօքթօյէն մայիս 11ին կը հաղորդեն որ Պալթիկեան նաւատորմի շարքէն մտած է Խաղաղական Ովկիանոսը: Այդ լուրը զեռ պաշտօնապէս հաստատուած չէ:

Վ Ր Ի Պ Ա Կ

«Շարժում» թիւ 710ի մէջ տպագրուած «Հայ և Մակեդոնական յեղափոխական շարժումներ» վերնագրով յօդուածին երկրորդ երեսին երրորդ սիւնակին մէջ տպուած նախապաշարուած բառին տեղ պիտի ըլլայ «նախապատրաստուած»: ու թարգմանութեան քովը Տօքթ. Ռաքովսքիյէ՝ իսկ թարգմանչին անունը ոչ թէ Ա. այլ Ս. Ղ.

Ա Ջ Դ

Աղքատ. Ընկեր. Գործ. Ժողովս կուգայ հրապարակաւ յայտարարել թէ Ընկերութեանս ի նպաստ սկսած է գանձանակ մը շրջաբերել հաւաքիչ պ. Հ. Քիրիչեանի ձեռամբ. եւ կը խնդրէ որ ամեն անհատ անխորհէն մասնակցի սոյն բարենպաստակ գործին որուն համար կանխաւ մեր շնորհակալիքը:

Սյա առթիւ նաեւ կուգայ խնդրել այն արգոյ ազգայիններէն, որոնք ինքնաբերաբար փափաքած են ընկերութեանս ամսական վճարում մը ընել, հաճին ըստ առաջնոյն վճարել հաւաքչին, ստանալով իրենց ընկալագրերը, որպէս զի Գործ. Ժողովս կարենայ միշտ նպաստել իրեն զիմօղ աղքատները:

Ի դիմաց Աղքատ. Ընկեր. Ասենապետ Ասենապետ
Յ. Ազապար Մ. Գարապեան

Շումանի Պետո. Պուլկարացիս ընթերցարանին մէջ կը ծախուի Հայ Յեղ. Դանակցութեան բարձրաբանական ոսկեզօծ գինանշանը գաճէ խիստ շքեղ պատրաստուած 49—43 սն. մեծութեամբ, Արձանագործ Պ. Որթէն Փափազեանէ. որ գեղարուեստական գնահատելի գործ մըն է:

Կարծէ որ ամեն հայ ու Դանակցական ընկեր ունենայ ան իր սենեակին մէջ:

Գինն է 10 Ֆրանք կանխիկ, զիմել Շումանի Պետո. Պուլկարացի ընթերցարանի վարչութեան:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна